## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Գեղանիստ
Հեռ. /093 / 89-97-37

<<29>> դեկտեմբերի 2015 թ.
N 35

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ֆ. ՑՈՒԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցոլակյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն, Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ, թիվ 17-Ա, 18-Ա, 19-Ն, 20-Ա և 21-Ն որոշումները:

Առդիր՝ 16 թերթ:

Հարգանքով՝

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 12003-15
29. 12 2015 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ N 17-Ա

<<25>> դեկտեմբերի 2015 թվական գյուղ Գեղանիստ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 2-րդ մանի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ղեկավարի 2016 թվականի վարձատրության չափը որոշել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ 28.72 տոկոսի չափով` 190000 (մեկ հարյուր իննուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին>> թիվ 31-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

Կողմ` 3 Դեմ` 0 Ձեռնպահ` 0

| | |
|---|---|
| ԱՍԼԱՆՅԱՆ ԶՈՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ | կողմ /___________/ |
| ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՍՈՒՐԵՆԻ | կողմ /___________/ |
| ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿ ՋԱՆԻԿԻ | կողմ /___________/ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ | Բացակայում է |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԱՄՎԵԼԻ | Ազատված է |

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

25 դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Գեղանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ N 18-Ա

<<25>> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Գեղանիստ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի քանակը՝ 9 միավորից:
2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների 2015 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 34-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՍԼԱՆՅԱՆ ՋՈՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ կողմ /______________/
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՍՈՒՐԵՆԻ կողմ /______________/
ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿ ՋԱՆԻԿԻ կողմ /______________/
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ Բացակայում է
ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԱՄՎԵԼԻ Ազատված է

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

25 դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Գեղանիստ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 18-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստի-քային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Տոկոսը համայնքի ղեկավարի աշխատա-վարձի նկատմամբ/ %/ | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափ /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| *Հայեցողական պաշտոններ* | | | | | | |
| 1. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 126 000 | 66.31 | 1 | 126 000 |
| *Համայնքային ծառայության պաշտոններ* | | | | | | |
| 2. | Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ թափուր | 1 | 130 000 | 68.42 | 1 | 130 000 |
| 3. | Առաջին կարգի մասնագետ-հաշվապահ/3.2-1/ | 1 | 126 000 | 66.31 | 1 | 126 000 |
| 4. | Առաջին կարգի մասնագետ/3.2-2/ | 1 | 126 000 | 66.31 | 1 | 126 000 |
| 5. | Երկրորդ կարգի մասնագետ – գանձապահ / 3.3-1/ | 1 | 115 000 | 60.52 | 1 | 115 000 |
| *Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ* | | | | | | |
| 6. | Տնտեսվար, ջրբաշխ | 1 | 100 000 | 52.63 | 1 | 100 000 |
| 7. | Գրադարանավար թափուր | 1 | 72 752 | 38.29 | 1 | 72 752 |
| 8. | Հավաքարար | 1 | 72 752 | 38.29 | 1 | 72 752 |
| 9. | Համակարգչային օպերատոր | 1 | 78 000 | 41.05 | 1 | 78 000 |
| *Աշխատակազմի քանակը* | | 9 /ինը/ | 946 504 | - | 9 | 946 504 |

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ N 19-Ն

<<25>> դեկտեմբերի 2015 թվական գյուղ Գեղանիստ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 33-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

| | | |
|---|---|---|
| ԱՍԼԱՆՅԱՆ ԶՈՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ | կողմ | /____________/ |
| ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՍՈՒՐԵՆԻ | կողմ | /____________/ |
| ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿ ԶԱՆԻԿԻ | կողմ | /____________/ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ | Բացակայում է | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԱՄՎԵԼԻ | Ազատված է | |

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

25 դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Գեղանիստ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստի. համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
25-ի թիվ 19-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

### I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարպետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերին, շինություններին /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ:

2/ սույն կետի 1/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտերի համար՝ ինն հազար դրամ,

բ/ 501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտերի համար՝ տասնհինգ հազար դրամ,

գ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

դ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ:

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

1/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտերի համար՝ ինն հարյուր դրամ,

2/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտերի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, այլ օբեկտների վերակառուցման, արդիականացման /բացառությամբ Հայաստանի հանրապետության

օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքեր գործառական նշանակության փոփոխություն՝ ինն հարյուր դրամ,

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառուցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործարառական նշանակության փոփոխության մասով..

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարաություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի համար կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությայն համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքնաչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:

5. Համյանքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երկու հարյուր դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երեսուն հազար դրամ:

դ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երկու հազար դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ:

ե) Համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

եա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ երկու հարյուր դրամ.

եբ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

եգ) մեկ շաբաթվա համար՝ չորս հազար դրամ.

եդ) մեկ ամսվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

եե) մեկ տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

5.1. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

1/ առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3/ բաղնիքների /սաունաների/ համար ՝ երկու հարյուր հազար դրամ.

4/ խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին ովազդ տեղադրելու թույտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է.

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝երկու հազար հինգ հարյուր դրամ.

3/ այլ արտաքին գովազդի համար ՝ հինգ հարյուր դրամ.

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ.

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երեք հարյուր դրամ.

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հիսուն հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ:

11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երկու հարյուր հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ:

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

## II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ չորս հազար դրամ.

2. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ տաս հազար դրամ.

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճարը սահմանվում է՝ մեկ հազար դրամ:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմավում է.

կենցաղային աղբի համար՝

ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝ երեք հարյուր դրամ.

5. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար.

ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երկու հազար դրամ:

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

<<25>> դեկտեմբերի 2015 թվական գյուղ Գեղանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՍԼԱՆՅԱՆ ՋՈՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ կողմ /______________/

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՍՈՒՐԵՆԻ կողմ /______________/

ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿ ՋԱՆԻԿԻ կողմ /______________/

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ Բացակայում է

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԱՄՎԵԼԻ Ազատված է

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

25 դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Գեղանիստ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստ համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 20-Ա որոշման

# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑՈՒՑԱԿ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

| | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԻ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՇՎԵԿՇ. ԱՐԺԵՔԸ | Փաստացի ֆիզիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| | գյուղապետարանի վարչական շենք | 1 | 1105488 | վթարային |
| | կուլտուրայի տուն | 1 | 2176429 | վթարային |
| | ջրագծի ներքին ցանց | 1 | 1087569 | |
| | հացահատիկի պահեստ | 1 | 1314264 | |
| | բուլդուզեր տրակտոր ԴՏ-75 | 1 | 325280 | անսարք |
| | ավտ. ՈՒԱԶ 469 ու | 1 | 76002 | անսարք |
| | տրակտոր Տ-40 ԱՆՄ | 1 | 213059 | անսարք |
| | ռեզերվուար 10 տ | 1 | 31093 | |
| | ռեզերվուար 3 տ | 1 | 13473 | |
| | կշեռք լծակավոր 500 կգ | 1 | 2418 | |
| | երկաթյա պահարան | 1 | 16940 | |
| | գրասեղան | 1 | 17325 | |
| | աթոռ | 1 | 5005 | |
| | բնակելի շենք | 1 | 5912000 | |
| | համակարգիչ | 2 | 899700 | |
| | գրադարան, գրականություն | 7151 | | |
| | պահարան | 1 | | |
| | Ցուցափեղկ | 2 | | |
| | կատալոգի արկղ | 1 | | |
| | գրասեղան | 2 | | |
| | սեղան դիմադիր | 1 | | |
| | էտաժերկա | 1 | | |
| | գրադարակ | 15 | | |
| | աթոռ | 5 | | |
| | աստիճան | 1 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կուլտուրայի տան գույք | | | |
| | ռադիոհանգույց | 1 | | |
| | ձայնագրիչ | 1 | | |
| | հնչյունային կալոնկա | 1 | | |
| | խոսափող | 1 | | |
| | գրասեղան | 3 | | |
| | վարագույր | 3 | | |
| | պահարան | 2 | | |
| | էլ. դաշնամուր | 1 | | |
| | էլ. արգամ | 1 | | |
| | տրասֆորմատոր | 2 | | |
| | դիսկոկոմպլեկտ | 1 | | |
| | ֆոտոապարատ | 1 | | |
| | քանոն | 1 | | |
| | քամանչա | 1 | | |
| | դուդուկ | 3 | | |
| | նարդի | 1 | | |
| | շախմատ | 1 | | |
| | դահլիճի նստարան | 200 | | |
| | աթոռ | 7 | | |
| | սեղան | 2 | | |

*Գեղանիստի համայնքի ղեկավար՝* *Ա. Ղազարյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 21-Ն

<<25>> դեկտեմբերի 2015 թվական գյուղ Չիթհանքով

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի 2016 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՍԼԱՆՅԱՆ ԶՈՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ կողմ /--------------/
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՍՈՒՐԵՆԻ կողմ /--------------/
ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿ ՋԱՆԻԿԻ կողմ /--------------/
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԱՀԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ Բացակայում է
ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԱՄՎԵԼԻ Ազատված է

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

25 դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Գեղանիստ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գեղանիստի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 21-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

## Համայնքի բյուջեի եկամուտները

(հազար դրամներով)

| h/h | *Եկամտատեսակները* | Ընդամենը բյուջե | Վարչական մաս | Ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|
| 1. | Հողի հարկ | 2,400.0 | 2,400.0 | 0.0 |
| 2. | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 3,041.6 | 3,041.6 | 0.0 |
| 3. | Տեղական տուրքեր | 96.0 | 96.0 | 0.0 |
| 4 | Դոտացիա | 22,375.6 | 22,375.6 | 0.0 |
| 5 | Հողերի վարձավճար | 445.6 | 445.6 | 0.0 |
| | *Ընդամենը եկամուտներ* | 28,358.8 | 28,358.8 | 0.0 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Հ/Հ | *Ծախսեր տնտեսագիտական* | Ընդամենը բյուջե | Վարչական մաս | Ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ 4111 | 13,000.0 | 13,000.0 | 0.0 |
| 2 | Էլեկտրաէներգիա 4212 | 800.0 | 800.0 | 0.0 |
| 3 | Կոմունալ ծառայութ. 4213 | 3,400.0 | 3,400.0 | 0.0 |
| 4 | Կապի ծառայություն 4214 | 300.0 | 300.0 | 0.0 |
| 5 | Գույքի և սարք. վարձակալ. 4216 | 700.0 | 700.0 | 0.0 |
| 6 | Ներքին գործուղումներ 4221 | 150.0 | 150.0 | 0.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Համակարգչային ծառ. 4232 | 40.0 | 40.0 | 0.0 |
| 8 | Տեղեկատվական ծառ. 4234 | 200.0 | 200.0 | 0.0 |
| 9 | Կառավարչական ծառայութ. 4235 | 300.0 | 300.0 | |
| 10 | Ընդհանուր բնույթի այլ 4239 | 1,250.0 | 1,250.0 | 0.0 |
| 11 | Շենքերի և շինությունների կառուցում 4251 | 2,200.0 | 2,200.0 | 0.0 |
| 12 | Մեքենաների և սարք. ընթացիկ նորոգում 4252 | 600.0 | 600.0 | 0.0 |
| 13 | Գրասենյակաին նյութեր 4261 | 160.0 | 160.0 | 0.0 |
| 14 | Տրանսպորտային նյութեր 4264 | 700.0 | 700.0 | 0.0 |
| 15 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 | 150.0 | 150.0 | |
| 16 | Հատուկ նպատակային նյութ 4269 | 800.0 | 800.0 | |
| 17 | Այլ նպաստներ 4729 | 800.0 | 800.0 | 0.0 |
| 18 | Պահուստաին ֆոնդ 4891 | 2808.8 | 2808.8 | 0.0 |
| | *Ընդամենը վարչական ծախսեր* | 28,358.8 | 28,358.8 | 0.0 |
| 1 | Շենքեր և շինութ. կապիտալ վերանորգում 5113 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 | Այլ մեքեն. և սարք.5129 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *Ընդամենը ֆոնդային ծախսեր* | 0.0 | 0.0 | 0.0 |
| | *Ընդամենը ծախսեր* | 28,358.8 | 28,358.8 | 0.0 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| h/h | *Ծախսեր գործառնական և տնտեսագիտական* | Ընդամենը բյուջե | Վարչական մաս | Ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|
| | *01,0,0,* | *17,400.0* | *17,400.0* | *0.0* |
| | *Ընդհանուր բնույթ.* 01.1.0. | 16,860.0 | 16,860.0 | 0.0 |
| 1 | Աշխատավարձ 4111 | 13,000.0 | 13,000.0 | 0.0 |
| 3 | Էլեկտրաէներգիա 4212 | 200.0 | 200.0 | 0.0 |
| | 4216 | 700.0 | 700.0 | 0.0 |
| 4 | Կապի ծառայություն 4214 | 300.0 | 300.0 | 0.0 |
| | 4221 | 150.0 | 150.0 | 0.0 |
| | Գյուղապետարանի շենքի նորոշում 4251 | 900.0 | 900.0 | 0.0 |
| 5 | Մեքենաների և սարք. ընթացիկ նորոգում 4252 | 600.0 | 600.0 | 0.0 |
| 6 | Գրասենյակաին նյութեր 4261 | 160.0 | 160.0 | 0.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Տրանսպորտային նյութեր 4264 | 700.0 | 700.0 | 0.0 |
| | Հատուկ նպատակային նյութեր 4267 | 150.0 | 150.0 | |
| 8 | Հատուկ նպատակային նյութ 4269 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | **01,3.0,** | **240.0** | **240.0** | 0.0 |
| 1 | Համակարգչային ծառ. 4232 | 40.0 | 40.0 | 0.0 |
| 2 | Տեղեկատվական ծառ. 4234 | 200.0 | 200.0 | 0.0 |
| | **01.6,0,** | **300.0** | **300.0** | 0.0 |
| 1 | Ընդհանուր բնույթ այլ ծառ. 4239 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | 4235 | 300.0 | 300.0 | 0.0 |
| | **Տնտեսական 04,0,0,** | **2,800.0** | **2,800.0** | 0.0 |
| | | | | |
| 1 | Ոռոգում 4213 | 1,000.0 | 1,000.0 | 0.0 |
| 2 | նավթամթերք և բնական գազ 4251 | 800.0 | 800.0 | 0.0 |
| | 4213 | 1,000.0 | 1,000.0 | |
| | **Շրջակա միջ. 05,0,0** | **900.0** | **900.0** | |
| 1 | Աղբահանում 05,1,0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 | Աղբահանում 4213 | 900.0 | 900.0 | 0.0 |
| | **Բնակ կոմուն. 06,0,0** | **1,600.0** | **1,600.0** | 0.0 |
| 1 | 06,3,1Ջրամատակարարում | 1,000.0 | 1,000.0 | 0.0 |
| 2 | Ջրամատակարարում. 4213 | 500.0 | 500.0 | 0.0 |
| | Խմելու ներքին ցանցի նորոգում 4251 | 500.0 | 500.0 | 0.0 |
| | 06,4,1, Փողոցների լուս. | 600.0 | 600.0 | 0.0 |
| 1 | Էլեկտրաէներգիա 4212 | 600.0 | 600.0 | 0.0 |
| 2 | Շենքերի և շինությունների կառուցում 4251 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | **Հանգիստ 08,0,0** | **2,050.0** | **2,050.0** | 0.0 |
| | 08,2,4, Մշակույթ կազմ | 2,000.0 | 2,000.0 | 0.0 |
| 1 | Ընդհանուր բնույթի այլ 4239 | 1,250.0 | 1,250.0 | 0.0 |
| 2 | Հատուկ նպատակայյնյութ 4269 | 800.0 | 800.0 | 0.0 |
| | Հուշարձանների և մշակույթային արժեքների վերականգնում և պահպանում 08.2.7 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1 | Շենքերի և շինությունների կառուցում 4251 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | **Կրթություն 09,0,0,** | **0.0** | **0.0** | 0.0 |
| | 09,2,2, Միջնակարգ կրթ. | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1 | Հատուկ նպատակայ. նյութ 4269 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2 | **10,7,1 Այլ նպաստներ 4729** | **800.0** | **800.0** | 0.0 |
| | **11,0,0 Պահուստ ֆոնդ** | **2,808.8** | **2,808.8** | 0.0 |
| | Պահուստային ֆոնդ 4891 | 2,808.8 | 2,808.8 | 0.0 |
| | *Ընդամենը ծախսեր* | 28,358.8 | 28,358.8 | 0.0 |

ԳԵՂԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ